

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի հունիսի 11-ի ՅՕ-105-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում ավելացնել «ժ.1» կետ հետևյալ բովանդակությամբ.

«ժ.1. Հայաստանի Հանրապետության վաստակավոր գրադարանավար »:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածից հետո ավելացնել «Հոդված 13.1» հետևյալ բովանդակությամբ.

«*Հոդված 13.1 Վաստակավոր գրադարանավարի պատվավոր կոչումը*

Վաստակավոր գրադարանավարի պատվավոր կոչում է շնորհվում գրադարանային գործի բնագավառում աշխատանքային երկարամյա փորձ, մասնագիտական բացառիկ կարողություններ, վաստակ եւ նվիրում ցուցաբերած գրադարանավարներին, ովքեր իրենց գործունեությամբ խթանել են ոլորտի զարգացումը, նպաստել հանրության կրթության ու դաստիարակության գործին, հոգեւոր-մշակութային արժեքների հանրահռչակմանն ու տարածմանը»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Յեղիճակներ` [Լիլիթ Գալստյան](#), [Վահան Հովհաննեսյան](#), [Միքայել Մանուկյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Անահիտ Բախշյան](#), [Յեղիճե Բիշարյան](#)